թագին չքանչաններն պարգեւել բարեհաճեցաւ ։ Նոյն երեկոյին ընդհանուր հիւպատոսն Պ. Ճոն Աշըլն մեծ հացկերոյթ մը տուաւ ի հիւպատոսարան Վսեմ. Նիքսին եւ Նիքսուհւոյն . իսկ տեղական Իշխանութիւնը չքեղ լուսաւորութեամբ մը տուաւ տօնախմբութիւնը նոցա ։

Բրուսիոյ — Գաղղիական վերջին պատերազմին ժամանակ Մեծ. Դուքսը Գերմանական 3դ զօրաբանակին (Լուարի բանակին) հրամանատարն էր ։ Նորին Բարձրութիւնը , Մարտ 1 եւ փետր. 18ին աստի մեկնեցաւ ցամաքաւ Դամասկոս եւ Պէյրութ երթալու , ուստի Զմիւռնիոյ եւ Աթէնքի վրայէն Ապրիլ ամսոյն Պօլիս հասնելու է ։

—Իտալական Տէրութիւնը ցարդ յատուկ հիւպատոս չունէր քաղաքիս մէջ եւ յունական հիւպատոսութիւնն եւս ընդհատած էր Կրետէի ապստամբութենէն ի վեր ։ Ներկայ ամսոյս մէջ երկու Տէրութեանց կողմէն կարգուած նոր հիւպատոսներն քաղաքս ժամանեցին եւ պատուով ընդունուեցան տեղական Իշխանութեան կողմէն ։

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակագրութիւն Տեառն Միքայէլի Ասորւոց Պատրիարքի հանեալ ի հնագոյն գրչագրէ , յԵրուսաղէմ ի տպարանի Սրբոց Յակոբեանց ։

Առաջին անգամ է որ տպագրութեամբ լոյս կը տեսնէ Միխայէլի Ասորւոյ Ժամանակագրութիւնն ընդարձակ ծանօթութեամբք որ եւ անշուշտ հետաքրքրական է ամէն բանասիրաց համար ։

Տպուած է մաքուր թղթի վրայ եւ կը ծախուի թէ Ս. Աթոռոյս գրադարանի եւ թէ Կ. Պոլսոյ Երուսաղէմատան մէջ. Գին 16 դահեկան ։

Նոյն հրատարակութեան մէջ կը գտնուի Մեծ. Սէթ Աբգարեանի խնկական լուսանկարէ առնուած վեմագիր պատկերն, որուն եւ նուիրուած է մատենի տպագրութիւնն այսպէս .

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԵԾԱՀԱՄԲԱՒ ՏԱՆՆ

ԱԲԳԱՐԵԱՆ

ՈՐ Ի ՀՆԴԻԿՍ

ՆՈՒԻՐԷ

ԳԵՐԱՄԵԾԱՐ ԵՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՊԱՐՈՆ ՍԷԹ Յ. ԱԲԳԱՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ԵՒ ՅԱՐԳԱԿԱՆ

ՁԳԱՑՄԱՄԲՔ ՈԳՒՈՅ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Նոյն այս Ժամանակագրութիւնն Ս. Աթոռս տպագրած է նմանապէս տարբեր գրչագրի վրայ , առանց ընդարձակ ծանօթութեանց , բանասիրաց հետազօտութեան եւ համեմատութեան համար , որ եւ կը ծախուի ի Գին 12 դահեկան ։

digitised by A.R.A.R.@